

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

SOMMAIRE

PAGE

ՊԱՏՄԱԿԱՆ
ԱՆԱՆԵԱՆ Հ. ՊՕՂՈՍ. — Ս. Գրիգոր Լուսա-
ւորչի ձեռնադրութեան թուականը և պա-
րագաները (Շար. եւ վերջ) 101

ԿՐՕՆԱԿԱՆ
ՏԷՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ Հ. ՆԵՐՍԷՍ. — Մեր Նախ-
նեաց հաւատքը — Պատարագ վասն ննջե-
ցելոց (Շար.) 114

ԾԻՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՅՈՒՆԻ Հ. ՎԱՐԴԱՆ. — Պատմութիւն Հա-
յոց Աղօթամատոյցին (Շար.) 130

ԳՐԱԿԱՆ
ԵՐԵՄԵԱՆ ԱՐԱՄ. — Եջեր աշուղական գրա-
կանութիւնից — Աշուղ Առաքել Յարու-
թիւնեան (Շար. եւ վերջ) 125

ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ Հ. ՎԱՀԱՆ. — Երանութեան
երգեր
Երանի՛ աղբասաց 140
Երանի՛ սղաւորաց 140
Երանի՛ հեղոց 141
Երանի՛ արգարոց 141
Երանի՛ ողորմածաց 142
Երանի՛ որ սուրբ են սրտիւք 142
Երանի՛ խաղաղարարաց 143
Երանի՛ որ հալածեալ իցեն 143
Երանի՛ յորժամ նախատիցեն զձեզ 144

ԼԵԶՈՒԱԿԱՆ
ՏԷՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ Հ. ՆԵՐՍԷՍ. — «Յոբէլեան»
բառի մասին (Յորելեան — Յորելին —
Յորելինական) 134
ՏԷՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ Հ. ՆԵՐՍԷՍ. — Ի սէր «Մե-
ծաւանդ»ին 147

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ
ՍՐԱՊԵԱՆ ԱՐԱՄՆԵՍԻՍ. — Tappeti d'Oriente
(Արեւելեան գորգեր) Հեղինակ՝ Արմէն
Պանկէլեան (աղ. Միլան, 1959) 145

HISTOIRE
ANANIAN P. PAUL. — La date et les cir-
constances de l'Ordination de St. Grégoire
l'Illuminateur (Suite et fin) 101

RELIGION
DER NERSESSIAN P. NERSES. — La foi
de nos ancêtres — Messe de Requiem
(Suite) 114

LITURGIE
HADSOUNI P. VARDAN. — Histoire du Bré-
viaire Arménien (Suite) 130

LITTERATURE
YEREMIAN ARAM. — Pages choisies de la
littérature des trouvères — Le troubadour
Haroutioun Arakélian (Suite et fin) 125

HOVHANNESSIAN P. VAHAN. — Chants des
Béatitudes
Bienheureux les pauvres ! 140
Bienheureux les affligés ! 140
Bienheureux les doux ! 141
Bienheureux les justes ! 141
Bienheureux les miséricordieux ! 142
Bienheureux ceux qui ont le cœur pur ! . 142
Bienheureux les pacificateurs ! 143
Bienheureux ceux qui sont persécutés . 143
Bienheureux serez-vous quand on vous ou-
tragera ! 144

LINGUISTIQUE
DER NERSESSIAN P. NERSES. — Sur le
mot « yobelean » 134
DER NERSESSIAN P. NERSES. — Pour l'a-
mour de la « Toute Merveilleuse » (langue
arménienne) 147

RECENSIONS
SIRABIAN ARAMAIS. — « Les Tapis d'O-
rient » de Mr. Armen Hangheldian (Mi-
lan, 1959) 145



1843 - 1960
ՃԺԸ. ՏԱՐԻ
•
ԹԻՒ 5 - 6
ՄԱՅԻՍ - ՅՈՒՆԻՍ

ԲԱԶՄԱՎԷՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ~ ԳՐԱԿԱՆ ~ ԳԻՏԱԿԱՆ ~ ԲԱՐՈՑԱԿԱՆ

Revue P A Z M A V E B

CXVIII^e année, 1960, N. 5 - 6 Mai - Juin

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԶԻ

ՋԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԹՈՒԱԿԱՆԸ ԵՒ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ

(Շար. տե՛ս «Բազմավէպ», 1960, թ. 3-4, էջ 53)

ՅԱՒԵԼՈՒԱԾՆԵՐ

1.

ԵՒՍԵԲԻՈՍ ԿԵՍԱՐԱՑԻԻ
ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Եւսեբիոս Կեսարացին իր Եկեղեցական
Պատմութեան Թ. դրքին Ը. գլուխին մէջ
կը պատմէ Մաքսիմիանոսի համար՝ թէ
«Յարեաւ եւ պատերազմ ի բռնաւորէն
ընդդէմ Հայոց, որք ի սկզբանէ անտի բա-
րեկամք եւ մարտակիցք էին Հռոմոց»
Դորս քրիստոնեայս եւ յերկրպագութիւն
ճշմարտին Աստուծոյ փոյթս նեղելով բռ-
նաւորին ատելոյն Աստուծոյ՝ զի կոտց եւ
նաւորին ատելոյն Աստուծոյ՝ զի կոտց եւ
դիւաց զոհեցեն, փոխանակ բարեկամաց՝
թշնամիս, եւ փոխանակ նիզակակցաց՝
պատերազմողս ընդդէմ իւր յարոյց զնո-
սա»։ Եւ պատերազմին արդիւնքին վրայ

անդրադառնալով կը գրէ. «Արդ նա (Մաք-
սիմիանոս) հանդերձ զօրօք իւրովք ի պա-
տերազմի անդ ընդդէմ Հայոց՝ ի բազում
ուրեք հարեալ վատթարէր առաջի նո-
ցա»¹¹⁶։

Այս վկայութեան մէջ չափեր ուզած են
տեսնել Մաքսիմիանոսի պատերազմը նորա-
դարձ քրիստոնեայ Հայաստանի դէմ. եւ
յաճախ, Հայոց դէմ ըսելու տեղ, Տրդա-
տի դէմ ըսելով՝ Եւսեբիոսի վկայութիւնը
բաւական այսփոխած են։ Եւ որովհետեւ
յաւանդեալ պատերազմը տեղի ունեցաւ 312ի
առաջները, բնական պիտի ըլլար հետեւ-
ցնել՝ թէ արդէն այդ թուականէն շատ ա-
ռաջ Հայաստան իր թագաւորին հետ ընդ-
դրեալ էր քրիստոնէութիւնը։

Սակայն Տիւրքէն¹¹⁷, Փրանսացի պատմա-
գէտը, յատուկ ուսումնասիրութիւն մը

lange Nicole, Genève et Bâle, p. 105-
109). — Հայ. թարգ. տես Հանդ. Ամս. ԻԴ
(1910) էջ 268-271։

116. Եւսեբիոս Կեսարացի, Պատմութիւն Եկեղեց-
ւոյ, Վենետիկ, 1874, էջ 688-689։

117. Duchesne, L'Arménie chrétienne dans
l'histoire ecclésiastique d'Eusèbe. (Mé-

նունն է: Իսկ Հռիփսիմէ անունը, իր այս ձեւին մէջ անծանօթ՝ կը մատնանշէ ազաւորութեան հռոմէական անունի մը, հաւանաբար առաջ եկած Crispina անունէն: Նունէ, Հռիփսիմեանց ընկերներէն մին, լատինական Nona անունը կը կրէ: Այսպէսով այս կոյսերու հռոմէական ծագումը ապացուցուած կարելի է նկատել:

Ապա հարկ է քննել թէ ի՞նչ պայմաններու տակ անոնք ստիպուել են Հռոմը թողուլ եւ ապաւինիլ Հայաստան: Ազաթեան-գեղորսի մէջ պահուած աւանդութեան համաձայն, Դիոկղետիանոս ուղեւոր մամուսնանալ՝ պատուիրակներ կը ղրկէ ամէն կողմ հարանցուններ փնտռելու. երբ պատուիրակները կը գտնեն Հռոմի կուսաստանի մը մէջ Հռիփսիմէն եւ կ'ուզեն զինքն Կայսեր ղրկել, կոյսերը կը խռովին եւ կ'որոշեն թողուլ Հռոմը ու երթալ աւելի ապահով տեղ մը: Հռիփսիմեանց պատմութեան մէջ կ'ըսուի թէ անոնք նախ Եգիպտոս եկած, ապա Պաղեստին անցած եւ անկէ Հայաստան մտած ըլլան: Բնական է որ այս պատմութեան ընթացքը իր ձեւով բոլորովին առասպելական տեսնուի. վասն զի Դիոկղետիանոս 300ի առնները բոլորովին ծերացած՝ նման գաղափար մը դժուար է որ ունեցած ըլլայ: Սակայն երբ Հռիփսիմեանց նահատակութեան թուականը փոխադրենք դէպի 313, համաձայնեցնելով Գրիգոր Լուսաւորչի Զեռնադրութեան նոր թուականին հետ, աւելի ղեւաւ կը գտնենք պատմական այն պայմանները, որոնք լրիւ կը բացատրեն Հռիփսիմեանց փախուստի պատճառները եւ Հայաստան ապաւինելու հարկը:

Եւսեբիոս Կեսարացի կը պատմէ՝ թէ երբ 306ի առնները Մաքսենտիոս Հռոմի իշխանութեան գլուխ անցաւ, սկիզբը ինքզինքը հեղափարոյ ցոյց կու տար եւ հրաման ալ հանած էր որ քրիստոնեաներու դէմ հալածանքը դադարեցնեն: Բայց, կ'ըսէ Եւսեբիոս, «Ոչ որպէս եւ կարծեցաւ նա եւ գործով գտաւ... զի Ի շնութիւնս եւ ի

բռնաբարութիւնս հանապազորդէր նա միշտ. որովհետեւ քակէր զկանայս յօրինաւոր լծակցաց իւրեանց եւ յետ անարգանացն առեալ վերստին ի նոսա դարձուցանէր. եւ զայս ոչ ընդ դուզնաքեայ մարդիկն միայն առնէր, այլ եւ ընդ այնոսիկ որք զնահապետութիւն սինկլիտոսին Հռոմէայեցւոց ունէին, եւ զփառաւորագոյնսն մանաւանդ ի նոցանէ անարգէր եւ թշնամանէր»¹²²:

Արդ, այսպիսի պայմաններու տակ՝ յայտնի է որ ազնուական տիկիները Հռոմի մէջ դժուարին պահեր անցնէին, եւ զարմանալի է որ Հռիփսիմէ եւ ընկերակից կոյսերը նման պարագաներու մէջ ինքզինքնին անապահով զգալով՝ փրկուէին աւելի ապահով միջավայր մը: Հռիփսիմէի ազնուական ծագումի մասին եղած աւանդութիւնն ալ այսու իր հաւանականութիւնը կ'ունենայ, քանի որ Մաքսենտիոսի հետապնդումները գլխաւորաբար ազնուականներու հանդէպ էր. եւ բնական է մտածելը որ ան հասարակ ու դամիկ ձեւով չէր կրնար կատարել իր կամքը, այլ կայսերական հրամանին տակ քողարկուած ձեւով: Արդ, եթէ Մաքսենտիոսի պատուիրակները հասան Հռիփսիմեանց կուսաստանը, անոնց փրկութեան միակ միջոցը փախուստն էր: Հռիփսիմեանց վկայաբանական պատմութեան մէջ կ'ըսուի թէ անոնք Հռոմէն փախչելով՝ նախ եկած ըլլան Եգիպտոս, ապա անցած Պաղեստին, եւ հուսկ Ասորիքէն անցնելով՝ մտած ըլլան Հայաստան: Եւսեբիոսի նոյն գլուխը կարդացողը շուտով կը նկատէ որ Եգիպտոս, Պաղեստին եւ Ասորիք, որոնք Մաքսենտիոսի իշխանութեան տակ էին, Հռոմէն աւելի ապահով միջավայր մը չէին կրնար ընծայել Հռիփսիմեանց. որովհետեւ հոն ալ ուրիշ բռնաւոր մը, Մաքսենտիոս Դաւա, ոչ միայն իր ընկերոջ պէս կը հետապնդէր կիները, այլ նաեւ խիստ հալածանք հանած էր քրիստոնեաներու դէմ¹²³:

122. Եւսեբիոս, Պատմ. Եկ. էջ 654-655:

123. Եւսեբիոս, Պատմ. Եկ. էջ 656-661:

Եւ այդ միջոցին շատ քրիստոնեաներ նախընտրեցին կամաւոր աքսորը յանձն առնել դէպի Պոնտոսի անտառախիտ լեռները, ինչպէս կը յիշէ Գրիգոր Նազիանզեացի¹²⁴ եւ կամ Պարսկաստան ինչպէս կ'ենթադրէ Եւսեբիոս: Եւ բնական կու դայ մտածել թէ նման պայմաններու տակ՝ Հռիփսիմեանց կոյսերն ալ փախած ըլլան Հայաստան:

3.

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՅԱՋՈՐԴՆԵՐՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՃՇՏՈՒՄՆԵՐ

Գրիգոր Լուսաւորչի անմիջական յաջորդներու ժամանակագրութիւնը կամ խում ունի Լուսաւորչի ձեռնագրութեան թուականէն. ուստի ասոր փոփոխութեամբ, հարկ էր ճշտել անմիջական յաջորդներու ժամանակագրութիւնն ալ, ինչ որ մտադիր ենք ընել ներկայ յաւելումներն մէջ:

Գրիգոր Լուսաւորչի անմիջական յաջորդներու մասին ամէնէն կարեւոր աղբիւրը Փաւստոս Բիւզանդի պատմութիւնն է, որ Արիստակէսէն սկսեալ մինչեւ Ապուլուրակէս, բոլոր կաթողիկոսներու մասին կը խօսի: Դժբախտաբար ժամանակաշրջանն ոչ մէկ ճշգրիտ տեղեկութիւն չի տար, այլ շատ ընդհանուր կերպով կը նշուի ժամանակակիցութիւն մը հայ թագաւորներու հետ: Նոյն տեսակ աղբիւր է նաեւ Եգնիկ երիցու անունով հասած Նկարագիր կարգաց կոչուած գաւազանաղբիւր¹²⁵, Ե. դարու գրութիւն, որ նոյնպէս չհասցած է աւանդել մեզի Կաթողիկոսներու յաջորդութիւնը՝ հայ թագաւորներու հետ ունեցած ժամանակակիցութեամբ, ըստ իրենց ժամանակակիցութեան ինչպէս Ս. Գրիգորէն մինչեւ Ս. Սահակ: Ասոնց ղեկմաց ունինք Մ. Սորենացիի

պատմութիւնը, ուր շատ մանրամասն ժամանակագրութիւն մը տրուած է թէ՛ կաթողիկոսներու եւ թէ՛ հայ թագաւորներու, նշանակելով իւրաքանչիւր կաթողիկոսին աթոռակալութեան առաջին տարին, տեղագրութիւնը եւ մահուան թուականը, համեմատուած հայ թագաւորներու գահակալութեան տարեթիւին հետ, որ՝ ինչպէս ըսինք՝ նոյն ժամանակի պաշտօնական քաղաքական թուականի ձեւն էր: Սորենացի աւելի եւս ճշտելով հայ թագաւորներու թուականը՝ նշանակած է յաճախ նաեւ Հռոմայեցի կամ Բիւզանդացի կայսրներու ժամանակակիցութեան տարիներն ալ: Սորենացիի ժամանակագրութեան այս գրութիւնը այնքան լաւ աշխատուած է, որ անոնք զիրար լրիւ կը բռնեն. դժբախտաբար մեր պատմահայրը իր հաշիւներու մէջ ունեցած է սխալ մեկը՝ ասկից իր ժամանակագրութեան մէջ խոշոր տարբերութիւն մը ստեղծուած է մեզի ծանօթ այսօրուան ժամանակագրութեան հետ: Մեզի համար Ս. Սահակի, գրութեանն: Մեզի համար Ս. Սահակի, ինչպէս նաեւ Ս. Ներսէսի ու Պապ թագաւորի մահուան թուականները որոշ ըլլաւորի մահուան թուականը Սորենացիի լով՝ կարելի է հակակշռել Սորենացիի ժամանակագրութիւնը: Բայց ի՞նչպէս ժամանակագրութիւնը: Սորենացիի թուականը 279ին: Ասով ան գրութեան թուականը 279ին: Ասով ան յաջորդած է Սորենացիի ժամանակագրական տուեալներուն հետեւելով՝ անսխալ կան տուեալներուն հետեւելով՝ անսխալ կերպով հասնիլ Ս. Սահակի մահուան թուականին: Բայց Մալխասեանի ճիշտ թուականին: Բայց Մալխասեանի այս գրութիւնը անընդունելի դառնալով: Սորենացիի ժամանակագրութեան, եւ անկէ առնելով ըլլալ Տրդատի թագաւորութեան սկիզբի տարին (287), ըլլալ Պապի մահուան թուականը (374), կը ջանայ այդ երկու ստորգ համարած թուականներու մէջ Սորենացիի

124. Գրիգոր Նազիանզացի, ճառ ի Ս. Բարսեղ: Հմմտ. Flische et Martin, Histoire, II, p. 469.

125. Ակինեան, Նկարագիր կարգաց ի բանից եզրկան երիցու, Հանդ. Ամս. ԾԱ (1937) էջ 518-520:

գաւորութեան տարիներն ալ կ'ընեն 32ի, եւ հարկ կ'ըլլայ ըսել թէ Խորենացիի 56 տարիները սխալ մը կամ թիւրիմացութիւն մը կ'ենթադրեն: Սերէոս շատ աւելի խոշոր սխալ մը կ'ընէ Տրդատի վերադարձը 70 տարիներ: Սակայն Խորենացիի սխալը դիւրին է գուշակել: ան իր պատմական տուեալներուն սխալ մեկնութենէն եղբակացուցած է 56 տարիները: Վասնզի գիտէ թէ Ս. Գրիգոր ձեռնադրուած է Տրդատի 17րդ տարին, ապա 30 տարի կաթողիկոս եղած է. Գրիգորի յաջորդած է Արիստակէս՝ 7 տարի. հուսկ Վրթանէսի 2րդ տարին վախճանած: Այս թիւերու գումարը ինքնին կը հասցնեն Տրդատի թագաւորութեան տարիները 56ի: Բայց մենք տեսնուք թէ Գրիգորի երեսուն տարիները պէտք է հաշուենք անոր առաքելական կեանքի սկզբէն, որ Տրդատի թագաւորութեան սկիզբն ալ է: Արիստակէսի եօթը տարիները կը մտնեն Լուսաւորչի կենդանութեան օրերուն: Եւ այսու Տրդատի թագաւորութեան տարիները կը վերածուին 32ի, ինչ որ պատմագիտութիւնն ալ կ'ընդունի:

Վրթանէսի կաթողիկոսութեան չըջանը կը համապատասխանէ զլիւսաւորաբար Խորով Կոտակի ժամանակին: Խորենացիի համաձայն, Խորով՝ Վրթանէսի միջնորդութեամբ՝ Կոստանդինոսէն թագաւոր կը կարգուի Հայաստանի: Պատմագէտները կ'ընդունին Խորենացիի վկայութիւնը Խորովի մասին՝ թէ «Թագաւորեալ ամս ինն»¹³⁶: Եւ պատմական որոշ փաստերու վրայ հիմնուած կը զետեղեն 330-339ի շրջանին¹³⁷:

Խորովի կը յաջորդէ Տիրան, որ՝ ըստ պատմահօր՝ 11 տարուան թագաւորութիւն կ'ունենայ. ուստի 339-350: Պատմագէտներու համաձայն այս թուականները յարմար կը տեսնուին. Վասնզի 338ին, երբ նոր մեռած էր Կոստանդիանոս,

նոս, Շապուհ համարձակութիւն կ'առնէ Հայաստանի վրայ յարձակելու եւ հայկական բանակները պարտութեան կը մատնուին: Թէեւ Փաւստոս այս պատերազմի մասին ակնարկ չ'ընէր, բայց Յուրանոսի ճառին մէջ, ուղղուած նորբնոր կայսեր, Կոստանդինոսին, կը յիշուին Հայաստանէն փախած թագաւորը եւ իշխանները՝ իրենց երկիրը վերադարձուցած է¹³⁸: 350 թուականն ալ պատմականօրէն նպաստաւոր է Տիրանի գերի բռնուելուն եւ Արշակի, անոր որդւոյն, թագաւորելուն: Վասնզի այդ թուականին է որ Շապուհ հօր յարձակում ըրաւ Միջագետքի վրայ եւ գրաւեց Մծրինը: Հոովմայեցիք զրազած իրենց ներքին դժուարութիւններով՝ չկրցան հակադարձակումը շուտով պատրաստել. եւ Շապուհ առիթը ունեցաւ Հայոց թագաւորը իր մօտ կանչելու եւ կուրցնելու, ի պատիժ դէպի Հոովմայեցիները ցոյց տուած անոր հաւատարմութեան: Բայց երբ Հոովմայեցիները կըրցան հակադարձակումի անցնելու եւ պարսկական բանակները ետ մղել, յունաց կայսրը պարտադրեց պարսից արքային՝ Հայոց թագաւորը վերադարձնել իր գահը: Տիրան աչքերէ զրկուած ըլլալով, տեղը՝ Արշակ, որդին, թագաւոր կարգուեցաւ: Այս մասին պատմական խառն յիշատակներ մնացած են Փաւստոսի պատմութեան մէջ¹³⁹:

Վրթանէսի մահը, Փաւստոսի համաձայն՝ տեղի կ'ունենայ Խորով թագաւորի մահէն վերջ. մինչ Խորենացի աւելի ճշգրիտ տեղեկութիւն մը ունի, որովհետեւ գիտէ թէ «Յետ լնոյ հնգետասան ամաց եպիսկոպոսութեան մեծին Վրթանայ փոխի յաշխարհէս յերրորդ ամի Տիրանայ»¹⁴⁰: Այսու Վրթանէսի մահը կրնանք զննել 342ին:

Վրթանէսի յաջորդ կը կարգուի Յու-

սիկ, Տիրան թագաւորի օրով, ինչպէս կը պատմէ Փաւստոս: Խորենացիի պատմութեան մէջ ճշտուած է անոր աթոռակալութեան տարին եւ պաշտօնի տեւողութիւնը: «Եւ յաջորդէ զաթոռն Յուսիկ, թիւնը: Եւ յաջորդէ զաթոռն Յուսիկ, որդի նորա (Վրթանէսի) ի չորրորդ ամի Տիրանայ, որ եկաց յեպիսկոպոսութեան ամս վեց»¹⁴¹: Հետեւաբար 342-348: Փաւստոս Բիւզանդ Յուսիկ Կաթողիկոսը յաճախ Մանուկ կ'անուանէ: Այս պարագան հարց կը ստեղծէ թէ քանի՞ տարեկանին հարց կը ստեղծէ թէ քանի՞ տարեկան, եւ կաթողիկոս եղած ըլլալու է Յուսիկ, եւ քննելու անոր ծննդեան թուականը: Քննելու անոր ծննդեան թուականը կաթողիկոսութեան կան որ կ'օգնեն մեր քննությունները կատարելու: Նախ Յուսիկի մեծ եղբոր Գրիգորիսի համար ըսուածը թէ «Երէց որդին (Վրթանէսի) Գրիգորիս ի հնգետասանամեայ եհաս յաստիճան եպիսկոպոսութեան կողմանց Աղուանից եւ Վրաց, այսինքն սահմանացն Մաղբթաց»¹⁴²: Երկրորդ՝ Յուսիկի համար ալ ըսուած է. «Իսկ զՅուսիկ սնուցանէր Տիրան որդի թագաւորին Խորովու եւ ետարքայորդին Տիրան զգուստը իւր կնուսութեան Յուսիկանն, որդւոյ Վրթանիսի»¹⁴³: Եւ այս ամուսնութեան համար կ'ենթադրէ թէ Յուսիկ երկոտասանամեայ եղած ըլլալ¹⁴⁴: Արդ, Գրիգորիսի մահուան թուականը բաւական ճշգրիտ կը ճանչնանք. Վասնզի Սանեսան թագաւորը Հայաստանի վրայ յարձակումէն առաջ տեղի ունեցած Վրայ յարձակումէն առաջ տեղի ունեցած է, ինչպէս կը պատմէ Փաւստոս: Իսկ Սանեսանի յարձակումը Հայաստանի վրայ տեղի ունեցաւ 335ին¹⁴⁵: Միւս կողմէն, Թաւմանակ Հայրապետաց¹⁴⁶ կողմէն գաւազանագիրքը Գրիգորիսի անուան դիմաց ժի տարի նշանակած է, որ եթէ սխալ մը չէ, պէտք է զանոնք Գրիգորիսի պաշմը չէ, պէտք է զանոնք Գրիգորիսի հաշուել, տօնին տեւողութեան տարիները հաշուել, սկսելով իր ձեռնադրութեան օրէն: Այսու

կ'ունենանք Ձեռնադրութեան թուականը 317ին. եւ ծննդեան թուականն ալ 302ին: Խորենացի ալ գիտէ թէ Գրիգորիս շատ փոքր տարիքի եպիսկոպոս եղած է, մինչեւ իսկ «պարականոն զերն վարկանէր կ'ըսէ»¹⁴⁷. եւ նաեւ թէ Գրիգոր Լուսաւորչի օրով ձեռնադրուած ըլլայ: Կարելի է չի օրով ձեռնադրուած ըլլայ: Կարելի է մտածել որ Գրիգորիսի ձեռնադրութեան ամսնութիւնը, այն է 317ին. ուստի անոր ծննդեան թուականն ալ հարկ է զետեղել 305ին: Այսու Յուսիկ իր կաթողիկոսութեան օրով 37 տարեկանի երիտասարդ մը կ'ըլլայ, որուն մանուկ մակդիրը շատ չի պատշաճիր: Սակայն նկատած անոր մանկահասակ ամուսնութեան պարամանկահասակ ամուսնութեան պարամանկահասակ է ըսել թէ պատմողի մտքին մէջ մանուկ մնացած ըլլայ ան: Օրմանեան չի հաւանիր երկոտասանամեայ ամուսնութեան կարելիութեան. բայց Ձեռնոր Գրիգորի մէջ նոյն տարիքը նշանակուած է Ս. Գրիգորի ամուսնութեան համար ալ. ուրեմն այդ չըջանին նման ամուսնութիւններ անհնարին ու անպատշաճ տեսնուած չեն. ապա թէ ոչ՝ այդ պատմիչներն իսկ պիտի վարանէին նշանակելու նման տարիք մը¹⁴⁸:

Յուսիկի զաւակներն ալ Պապ եւ Աթանազիոս, թագաւորական ընտանիքի անդամ, իրենց հօր նման շուտով ամուսնաւորացած ըլլալու են, այնպէս որ Ներսէսի ծրցած ըլլալու են ատենները զետեղելու ենք, թուական մը՝ զոր Օրմանեանէն սկսեալ շատեր կ'ընդունին:

Յուսիկի մահէն վերջ, նախ Դանիէլ կ'ընտրուի, որ սակայն տակաւին յանձն չառած իր պաշտօնը՝ Յուսիկի վիճակին կ'արժանանայ: Յետոյ, Փաւստոսի համաձայն, կաթողիկոսական աթոռը թամազայն, կ'արժանանայ, որ կը գտնեն Փապուր կը մնայ, մինչեւ որ կը գտնեն Փապուր անուն երէց մը Տարօն գաւառէն: Խոր-

136. Մ. Խորենացի, Պատմ. Գ. Ժ. էջ 416:

137. Մանանդեան, Քննական տեսութիւն, էջ 137-151:

138. Մանանդեան, Անդ, էջ 151-157:

139. Փ. Բիւզանդ, Պատմ. Գ. ԻԱ.:

140. Մ. Խորենացի, Պատմ. Գ. Ժ. էջ 419:

141. Մ. Խորենացի, Պատմ. Գ. Ժ. էջ 419:

142. Փ. Բիւզանդ, Պատմ. Գ. Ե. էջ 22:

143. Փ. Բիւզանդ, Անդ:

144. Փ. Բիւզանդ, Պատմ. Գ. Ե. էջ 23:

145. Մանանդեան, Քննական տեսութիւն, էջ 145:

146. Աղիւնեան, Նկարագիր Կարգաց, անդ, էջ 520:

147. Մ. Խորենացի, Պատմ. Գ. Գ. էջ 403:

148. B. Talatinian, De contractu Matrimoniali iuxta armenos, Hierosolymis, 1947, p. 169.

նի վրայ ու նկարագրելու անոնց իւրաքանչիւրին պարտութիւնը կ'եղրակացնէ. «Զերեւուն եւ զչորս ամ ետուն պատերազմ երկիրս Հայոց ընդ թագաւորին պարսից»¹⁵⁷: Արդ այս երեսնամեայ պատերազմները ամէնէն աւելի երկար ու զօրաւոր կերպով տեղի ունեցան Արշակ թագաւորի ժամանակ, որուն հետեւանքով՝ ան կորսնցող թագը եւ կեանքը. ասկից պատմագիրն մտքին մէջ անշուշտ տպաւորուած է որ ամբողջ երեսնամեայ պատերազմները Արշակի օրերուն տեղի ունեցած ըլլան. մինչդեռ անոնք սկիզբ առած էին 335ին՝ Խոսրով Կոտակի ժամանակէն: Խորենացի աղբուած Փաւստոսի պատմութենէն՝ Արշակի վերադարձ է երեսուն տարուան թագաւորութիւն, եւ անոր հետեւանքով՝ Ներսէսի ալ 34 տարուան կաթողիկոսութիւն, 28 տարի Արշակի ատեն, եւ 6 տարի Պապի ժամանակ: Ուստի կրնանք Խորենացիի հաշիւները թողուլ և հետեւել պատմութեան տուեալներուն:

Կայ Փաւստոսի տեղեկութիւնը, որուն համեմատ, Ներսէս՝ Եւսեբիոսէն ձեռնադրուած, պէտք էր 364ի ատենները կաթողիկոս եղած ըլլար: Պէտք է ըսենք որ հոս ալ թիւերիմացութեան մը դիմաց կը դրտնուինք, որուն բացատրութիւնը նոյն ինքն Փաւստոսի գրքին մէջ կարելի է գտնել: Փաւստոս Ս. Ներսէսի ձեռնադրութեան պարագաները նկարագրած ատեն՝ շատ աղբուած կը տեսնուի Ս. Բարսեղի վարքէն: Ներսէսի ձեռնադրութեան առթիւ աղանձի իջման պատմութիւնը առնուած է անշուշտ Ս. Բարսեղի վարքէն, ուր նոյնը կը պատմուի Կեսարիոյ ապագայ հայրապետի ձեռնադրութեան առթիւ: Փաւստոս այնպէս յարմարեցուցած է որ աղանձին Ներսէսի վրայ իջնելէ վերջ՝ երթայ ու հանգչի նաեւ Բարսեղի վրայ. ասկից Եւսեբիոս եպիսկոպոսին նախան-

ձը՝ իր երիցապետին հանդէպ եւ Բարսեղի հեռանալը Կեսարիայէն: Բնականաբար այս պարագաներուն ստեղծումը կը պահանջէր որ Ներսէսի ձեռնադրութիւն ըլլայ Եւսեբիոս: Ուստի Փաւստոսի վկայութիւնը ալ այս մասին մէջ կարելի է զանց ընել իբր վիպական ու անձիշտ:

Հուսկ կը մնայ Անտիոքի ժողովքին (363-4) մասնակցող եւ ստորագրող Յուսիկի՝ Հայոց եպիսկոպոսին ներկայութիւնը¹⁵⁸: Եթէ Ներսէս 353էն ի վեր կաթողիկոս էր՝ իրեն կ'իյնար նոյն ժողովքին ներկայ ըլլալը եւ ոչ ուրիշի մը: Այս դժուարութեան լուծումը մասամբ աւելի դիւրին կը համարիմ, քանի որ Փաւստոս յայտնի կերպով կը պատմէ թէ Գնելի ըստ պատմութենէն վերջ «սուրբ կաթողիկոսն Ներսէս այլ ոչ եւս յաւել տեսանել զերես Արշակայ մինչեւ յօրն նորին կորուստեան»¹⁵⁹: Արշակ ալ անոր տեղ ընտրեց Չոնակ անուն մէկը: Արդ, Գնելի սպանութիւնը տեղի ունեցած կը համարուի 359ի Օգոստոս 29ին¹⁶⁰: Այդ թուականէն մինչեւ Արշակի մահը (367) ութ տարիներ Ներսէս պաշտօնէն քաշուած է: Բայց Ներսէսի տեղ՝ Արշակ կարգեց Չոնակ անուն մէկը, զոր Օրմանեան կ'ուզէ նոյնացնել Շահակի հետ. մինչդեռ տեսանք որ Չոնակ «Ստրուկ մի ի ստրկաց արքունի» կը կոչուի Փաւստոսէն, մինչ Շահակ՝ Աղբիանոսի տոհմէն էր. վերջինը Կեսարիա զրկուած էր ձեռնադրութեան, իսկ Չոնակ Հայաստանի մէջ կը ձեռնադրուի: Ուստի այդ երկու անձերը չէ կարելի նոյնացնել. բայց քանի որ Շահակի մահը յիշուած չէր Փաւստոսէն, կարելի է դուրսէն նոյն Շահակը համարել Անտիոքի ժողովքին մասնակցողն ու ստորագրողը:

Այսպէս կարելի է լուծուած համարել Ներսէսի կաթողիկոսութեան թուականներուն յարուցած դժուարութիւնները: Այս լուծումներն ալ կը համաձայնին Օրմա-

նեանի հանած եղրակացութիւններուն. ուստի կրնանք վերջացնել մեր ուսումնասիրութիւնը Ս. Ներսէսի մահուան թուականով (373), որ պատմականօրէն ստուշուած տարեթիւ մըն է եւ ամէնքէն որոշապէս ընդունուած:

Ամփոփելով մեր ըսածները, ահա կուտանք նաեւ ժամանակագրական ցուցակ մը թագաւորներու եւ կաթողիկոսներու՝ իրենց զահակալութեան թուականներով

եւ տեղեկութեան տարիներով, Տրդատ Գ. արքայի եւ Գրիգոր Լուսաւորչի օրերէն սկսած մինչեւ Արտաշէսի անկումը եւ Ս. Սահակի մահը: Թէեւ ցուցակին երկրորդ մասը մեր ուսումնասիրութեան մաս չէր կազմեր, բայց այդ շրջանին համար ալ հետեւելով առաւելապէս Փ. Բիւզանդի աւանդած տեղեկութիւններուն՝ ջանացինք զանոնք հաշտեցնել Ս. Խորենացիի թուականներուն հետ:

Հ. ՊՕՂՈՍ ԱՆԱՆԵԱՆ

Թագաւորներ	ամֆ	Կաթողիկոսներ	ամֆ
Տրդատ Գ.	298-330	32	Գր. Լուս. (298) - 314-328 30
			Արիստակէս 320-327 7
Խոսրով Գ.	330-339	9	Վրթանէս 327-342 15
Տիրան	339-350	11	Յուսիկ 342-348 6
			Փառէն 348
			Շահակ 349-353 4
Արշակ	350-367	17	Ներսէս 353-359 6
			Չոնակ
			Շահակ (բ. անգամ)
Պապ	367-374	7	Ներսէս (բ. անգամ) 367-373 6
Վարազդատ	374-378	4	Յուսիկ Բ. 373-377 4
Արշակ	379-387	8	Ջառէն 378-381 3
			Շահակ Կորճեայ 381-383 2
Խոսրով	384-389	5	Ասպուրակէս 383-387 4
			Ս. Սահակ 387-438 51
Վռամշապուհ	401-417	16	
Շապուհ	418-422	4	
Արտաշէս	422-428	6	

157. Փ. Բիւզանդ, Պատմ. Դ. Ժ. էջ 166:

158. Socratis scolastici Historia Ecclesiastica, III, 25.

159. Փ. Բիւզանդ, Պատմ. Դ. Ժ. էջ 132:

160. Օրմանեան, Ազգապատում, Ա. էջ 180: